

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՑՈՒ

Վ. Ոսկանյան, Վ. Գրիգորյան

### ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐՈՒՄ

Հայկական ՍՍՌԻ ԳԱ Պատմության ինստիտուտը նախաձեռնել է պարբերաբար կազմակերպվող արշավախմբերի միջոցով նյութեր հավաքել և հնարավորություններ ստեղծել ուսումնասիրելու Ռուսաստանի հայկական գաղթավայրերի պատմությունը: Այդ նպատակով 1955 թ. կեսերին մենք գործուղվեցինք Աստրախան և Կազան քաղաքները:

Հայտնի է, որ գաղթի առաջ հայ ժողովրդի ահագին զանգվածներ բազմաթիվ տեղեր, կոտորածների և ավերմունքների պատճառով հեռանում էին իրենց հայրենիքից և մոտ ու հեռու երկրներում փնտրում կյանքի ու պատվի փրկության պայմաններ: Աշխարհի տարբեր երկրներում մեծ արագությամբ սկսում են առաջանալ հայկական գաղթավայրեր: Առանձնապես ուշադրության արժանի են Ռուսաստանում ստեղծված գաղութները, որտեղի հայերը մեծ մասամբ ապրել են բավականին ապահով պայմաններում, ունեցել են իրենց ինքնավարությունը և ուրույն կուլտուրական կյանքը: Այդ գաղթավայրերի հայերը հնարավորության սահմաններում սերտ կապ են պահպանել մայր երկրի և միմյանց միջև, գործակցել են իրենց հյուրընկալած ժողովուրդների հետ՝ օտար զավթիչների դեմ պայքարելիս, հաճախ գլուխ են բարձրացրել սոցիալական և ազգային ճնշման դեմ: Ուստի, հասկանալի է, թե որքան մեծ է հայկական գաղթավայրերի պատմության ուսումնասիրության նշանակությունը, ինչպես հայ ժողովրդի, այնպես և սովետական մյուս ժողովուրդների անցյալի բազմակողմանի և գիտական պատմությունը ստեղծելու գործում:

Մենք եղանք Աստրախանում, որտեղի հայկական գաղութը ստեղծվել է հնագույն ժամանակներում, բայց ամրապնդվել ու հայերի մշտական բնակավայր է դարձել Աստրախանի խանությունը Ռուսաստանին միացնելու ժամանակներից (1556 թ.), սրանից սուղիղ շորս հարյուր տարի առաջ:

Աստրախանի հայերը ունեցել են իրենց ինքնավարությունը («Հայկական դատարան»), թաղամասերը, եկեղեցիները, դպրոցները, ակումբները, տուրքարանը, գրադարանը: Քաղաքի տարբեր մասերում այժմ մնում են հայկական գաղութի շատ հուշարձաններ: Քաղաքի կենտրոնական մասում՝ Մոսկովյան փողոցի վրա, հնդկական հինավուրց քարվանսարայի դիմաց, դեռևս կանգուն է 17-րդ դ. հիմնված հայկական քարվանսարան, որը հնագույններից ժեկն է Աստրախանում: Հայկական քարվանսարան երկհարկանի քարե շենք է, կառուցված է արևելյան ոճով, ունի բազմաթիվ սենյակներ և նկուղներ, ֆրոնտոնը եռանկյունի է և շատ գեղեցիկ:

Քաղաքի արևելյան մասում՝ Վոլգայի վտակ Կուտում գետի աջ բարձրագիթ ափին գտնվում է հայկական երկրորդ դերեղմանատունը, որը երկու հարյուր

տարվա պատմություն ունի: Այնտեղ կան հարյուրավոր մարմարե գեղեցիկ գերեզմանաքարեր և մի մեծ մատուռ: Գերեզմանատանը դեռևս պահպանվել են աստրախանցի հայ նշանավոր ընտանիքներից շատերի՝ Նզովների, Սերեր-բյակովների, Սապոժնիկովների, Պորտնովների, Մակարովների, Ֆաբրիկան-տովների, Բորոգինովների, Սրասինիկովների, Գրանիլշիկովների, Պոսլով-ների, Աղաբաբովների, Չիժովների և այլոց գերեզմանները: Մենք շատ փնտրեցինք, բայց չգտանք աշխարհահռչակ երգչուհի Նադեժդա Պապայանի գերեզմանը: Եթե այն տեղափոխված չէ այլ գերեզմանատուն, ուրեմն անդարձ կորել է:

Հայկական մյուս գերեզմանատունը (նախկին Ս. Խաչ վանքին կից), որը գտնվում է ներկա հայկական եկեղեցու մոտ, Չորրորդ Նարոդնայա և Դևլանայա Պրոդոլնայա փողոցների հատման վայրի շրջակայքում, քաղաքի ընդլայնման կապակցությամբ տարիներ առաջ վերացվել է: Այնտեղ մնում են միայն մի քանի գերեզմանաքարեր, որոնցից մեկը, տեղական բնակչության ասելով, Իսրայել Օրունն է: Այդ գերեզմանաքարը 2 մետր երկարություն և 60 սմ լայնություն ունի, այն ամբողջովին թաղված է հողի մեջ և միայն վերևի մասն է երևում, որտեղ եղած արձանագրությունը մաշված է: Անհրաժեշտ է կադմակերպել այդ գերեզմանի պեղումը և եթե հաստատվի, որ այն, իրոք Իսրայել Օրունն է, ապա լավ կլինի մասնագետների միջոցով վերականգնել հայ ազատագրական շարժման այդ նշանավոր գործչի դիմանկարը:

Աստրախանի հայկական գաղութի պատմության համար շատ նյութեր կան ՍՍՌՄ ՆԳՄԻՆԻստրոյան Աստրախանի մարզի պետական արխիվում: Բեպետ այդ արխիվի նյութերի հնագույն մասը (16-րդ դարի կեսերից մինչև 18-րդ դարի կեսը) ոչնչացված է, բայց մնացած նյութերը չափազանց առատ են և արժեքավոր տեղեկություններ են պարունակում ոչ միայն հայ գաղութի, այլև Անդրկովկասի պատմության վերաբերյալ: Այնտեղ շատ նյութեր կարելի է գտնել անդրկովկասյան և ոռուս ժողովուրդների բարեկամական հարաբերությունների մասին:

Այդ արխիվում մեզ հաջողվեց գտնել բազմաթիվ հայերեն տպագիր և ձեռագիր գրքեր, որոնք, շնորհիվ մարզի արխիվային գործերի բաժնի վերին աստիճանի սիրալիր և բարյացակամ վերաբերմունքի, հնարավոր եղավ տեղափոխել Խրևան և այժմ նրանք Մատենադարանի սեփականությունն են հանդիսանում: Այդ գրքերից 173-ը տպագիր են, իսկ 14-ը՝ ձեռագիր: Տպագիր գրքերի մեջ կան նաև այլ լեզուներով գրքեր, որոնցից չորսը ռուսերեն է, ութը՝ լատիներեն, երկուսը՝ հին վրացերեն և մեկական գիրք մոնղոլերեն ու արաբերեն: Հայերեն գրքերից 9-ը 17-րդ դարի հրատարակություններ են, 16-ը՝ 18-րդ դարի: Դրանցից մի քանիսր մատենադարանում չկար, օրինակ Մ. Ֆեպուրյանի «Մանաթանդականի առարկությունը»-ը հրատարակված Հոռոմում 1681 թ., Գ. Նարեկացու «Գիրք աղոթից»-ի Վենետիկի 1789 թ. հրատարակությունը և այլն:

Ձեռագրերի մեծ մասը 17—18-րդ դարի է: Նրանցից մեծ հետաքրքրություն է ներկայացնում «Ջամբու» վերնագրով մագաղաթակազմ մի մեծ գիրք, գրված 1778 թ.: Այդ ձեռագիրը Աստրախանի ս. Աստվածածին եկեղեցու գույքամատյանն է, կազմված է արքեպիսկոպոս Հովսեփ Արղությանի ձեռքով: Մինչև օրս անհայտ այդ «Ջամբու»-ը չափազանց հետաքրքիր տեղեկություններ է պարունակում եկեղեցու ունեցվածքի, հարստության, նրանց ձեռք բերման աղբյուրների մասին:



Մասնավոր կարգով մեզ հաջողվեց ձեռք բերել նաև 18-րդ դարի երկրորդ կեսին գրված ոտանավորների մի օրգինալ ձեռագիր և աղոթատետր, ինչպես նաև Ամստերդամում 17-րդ դարի վերջում և 18-րդ դարի սկզբում Ղ. Վանանդեցու հրատարակած գրքերի կոմպիլետը, որի մեջ է նաև «Գիրք չափոց, կըշ-ռից...» (1699 թ.) բիբլիոգրաֆիական հազվագյուտություն համարվող այդ ուշագրավ աշխատությունը։ Այս գրքերը ևս հանձնված են Մատենադարանին։

Մեզ հաջողվեց տեսնել և լուսանկարել Աստրախանում հրատարակված «Արևելյան ծանուցմունք» շաբաթաթերթը, որը համարվում է աշխարհում յոթե-րորդ, իսկ Ռուսաստանում առաջին հայկական պարբերականը։ Մենք գտանք նաև թերթի հրատարակման ողջ գործը և այդ մասին շուտով կանդրադառնանք մի այլ հոդվածով, սակայն այստեղ ավելորդ չենք համարում մի քանի մանրա-մասնություններ նշել թերթի մասին։

Այդ շաբաթաթերթի վերնագիրը մինչև այժմ հայտնի չէր. Գ. Լևոնյանը գրել է «Ծանուցմանց շաբաթաթերթ»<sup>1</sup>, իսկ Հ. Պետրոսյանը՝ «Արևելյան ծանուց-մանց»<sup>2</sup>։ Այնինչ, թերթը սկզբից մինչև վերջին համարը կոչվել է «Արևելյան ծանուցմունք», որը «Վոստոչնիե իդվեստիա» անվան թարգմանությունն է, որովհետև տպագրվում էր այդ լրագրի հետ միասին։ Թե Լևոնյանը և թե Պետրոս-յանը թերթի խմբագիր-հրատարակիչ են համարում Կղեմես Շահվերդյանին, մինչդեռ վերջինս եղել է լոկ թարգմանիչը և ակտիվ աշխատակիցներից մեկը, իսկ խմբագիր-հրատարակիչն է եղել Աստրախանի գիմնազիայի գերմաներեն լեզվի ուսուցիչ, ավստրիացի Իոսիֆ ֆոն Վեյսբհոպֆենը։ Գ. Լևոնյանը նշում է, թե այդ թերթը լույս է տեսել 1815 թ. հոկտեմբերի 20-ից մինչև նոյեմբերի վերջը, միայն մի քանի համար<sup>3</sup>։ Իսկ Հ. Պետրոսյանը գրում է. «Մինչև այժմ չի պարզված, թե «Արևելյան ծանուցմանց» ռուս-հայերեն թերթը որքան է տևել, քանի համար է լույս տեսել»<sup>4</sup>։ Մեզ հաջողվեց պարզել, որ «Արևելյան ծանուցմունք»-ը լույս է տեսել 1816 թ. հունվար-հուլիս ամիսներին, ընդամենը 27 համար։ Թերթի դադարման փաստը Հ. Պետրոսյանը բացատրում է այն բա-նով, որ 1815 թ. վերջերին Ռուսաստանից սկսեցին արտաքսել ճիզվիթիներին և «...անպայման եզվիտ Կղեմես Շահվերդյանը և իր ընկերները նույնպես ար-տաքսվել և «Արևելյան ծանուցմանց» թերթն էլ դադարել է»<sup>5</sup>։ Սա ճիշտ չէ. որովհետև թերթը, ինչպես գրված է «Արևելյան ծանուցմունք»-ի վերջին հա-մարի 2-րդ էջում, դադարել է նրա խմբագիր-հրատարակիչ Ի. Վեյսբհոպֆենի մահվան պատճառով, որը տեղի է տևեցել 1816 թ. հուլիսի սկզբին։

Աստրախանի մարզի գավառագիտակառն և Ս. Մ. Կիրովի անվան թանգա-րաններում բազմաթիվ հետաքրքրական նյութեր կան, որոնք վերաբերում են Ռուսաստանի՝ դեպի Անդրկովկաս կատարած արշավանքների նախապատրաստ-մանը, Աստրախանի հայ գաղութի պատմությանը, ինչպես նաև Աստրախանում ապրած հայ ուսուցիչներին գործունեությանը։ Այդ երկու թանգարաննե-րում էլ փակցված են քաղաքացիական կռիվների հերոս աստրախանցի հայ Ստեփան Չալարյանի նկարները։ Մեզ հաջողվեց Ս. Չալարյանի մասին հավա-քել բազմաթիվ նյութեր և նրա մի քանի, մինչև այժմ չհրապարակված, նկար-

<sup>1</sup> Գ. Լևոնյան, Հայոց պարբերական մամուլը, Երևան, 1934, էջ 4։

<sup>2</sup> Հ. Պետրոսյան, Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա, Երևան, 1936, էջ 13։

<sup>3</sup> Գ. Լևոնյան, Նշված աշխատությունը, էջ 4։

<sup>4</sup> Հ. Պետրոսյան, Նշված աշխատությունը, էջ 13։

<sup>5</sup> Նույն տեղում։

ներ (տե՛ս «Տեղեկագիր», 1955 թ., № 11): Չալաբյանի անունը շատ հայտնի է Աստրախանում: Աստրախանցիները հարգում են իրենց համաքաղաքացու հիշատակը և քաղաքի փողոցներից մեկը կոչել են Չալաբյանի անունով:

Ս. Մ. Կիրովի անվան թանգարանում մեր ուշադրությունը գրավեց աստրախանցի հայ նկարիչ Պորտնովի ստեղծած յուղաներկ կոմպոզիցիոն մի նկար, որը նվիրված է Կամոյի Աստրախանում լինելու փաստին: Այդ նկարում պատկերված է Կամոն, որ կառնված է հեռագրի ապարատի մոտ և զրույց է անում Կիրովի ու Օրջոնիկիձեի հետ:

Աստրախանի նյութերին ծանոթանալուց հետո, մենք «Սպարտակ» շոգենավով դուրս եկանք քաղաքից և Վոլգայով ուղևորվեցինք դեպի Կաղան, այն ճանապարհով, որով այդքան հաճախ Պարսկաստանից դեպի Ռուսաստանի կենտրոնները ու Եվրոպա են ուղևորվել հայ ճանապարհորդները:

Կաղանում ևս պահպանվել են շատ հայկական հուշարձաններ: Այնտեղ եղել է հայկական թաղամաս, որի գլխավոր՝ Հայկական կոչված փողոցը (այժմ «Սպարտակովսկայա») արևմտյան մասով հասել է մինչև Վոլգային կապված գետերից մեկին, որը հետագայում անջատվել է Վոլգայից և կոչվել է Հայկական լճակ («Արմյանսկի պրուդ»):

Հայկական փողոցից քիչ հեռու, Կալինինի անվան փողոցի մոտ, մի զանդեթի բլրակի վրա գտնվում է Կաղանի հայկական գերեզմանատունը: Այնտեղ դեռևս պահպանվել են շատ գերեզմանաքարեր, որոնք բոլորը Վոլգայի ափից բերված սպիտակ, շուտ փշրվող քարից են և չեն պահպանել իրենց վրա եղած արձանագրությունները: Տեղական բնակիչները և ՍՍՌՄ ԳԱ Կազանի ֆիլիալի պատմության և գրականության ինստիտուտի աշխատակից հնագետ Կալինինը, որը Կաղան քաղաքի պատմության լավագույն մասնագետներից մեկն է, պատմում էին մեզ, որ այդ գերեզմանատանը կա հողի տակ թաղված մի մեծ գերեզմանաքար, վրան արևային ժամացույց փորագրված և որ այդ բլրակի վրա կատարվող շինարարական աշխատանքների ժամանակ դուրս են գալիս բազմաթիվ հին գործիքներ, զենքեր, դրամներ: Այդ գերեզմանատունը շատ բան կարող է տալ Թաթարական ԱՍՍՌ-ի տերիտորիայում բնակված հայերի պատմության վերաբերյալ, ուստի անհրաժեշտ է կազմակերպել նրա հնագիտական ուսումնասիրությունը:

Թաթարական ավտոնոմ ռեսպուբլիկայի գավառագիտական թանգարանում ևս շատ հետաքրքիր նյութեր կան հայերի մասին: Թանգարանի մի փոքրիկ բաժին նվիրված է հայտնի հնագետ, պրոֆ. Ա. Պ. Սմիրնովի կողմից հին Բուդաղում կատարված պեղումներից հայտնաբերված հայկական նյութերին: Այնտեղ ցուցադրված են բազմաթիվ զենքեր, գործիքներ, զարդեր, Պատին փակցված է այսպես կոչված «հունական տաճարի» սխեման, որը, ըստ մասնագետների կարծիքի, ոչ այլ ինչ է, բայց եթե հայկական եկեղեցի: Ցուցադրված են նաև երկու բրոնզե կիսանդրիներ, որոնցից մեկի տակ գրված է. «14-րդ դարում Բուդաղում եղած հայկական գաղութի բնակիչ, վերականգնել է քանդակագործ Մ. Մ. Գերասիմովը 1944 թ. պեղումներից հանված գանգից»: Դա տիպիկ հայկական դիմագծերով մի տղամարդու գլուխ է, իսկ մյուսը՝ չինուհու է, դարձյալ հանված է հայկական գաղթավայրի գերեզմանատնից:

Թանգարանում պահվում են նաև 12—13-րդ դարի հայկական գերեզմանաքարեր, սակայն նրանք գտնվում էին ուրիշ գերեզմանաքարերի տակ և մենք չկարողացանք նրանց տեսնել: Թանգարանի պատկերասրահում փակցված էին



Հովհաննես Այվազովսկու հետևյալ նկարները. «Ղրիմյան տեսարան», «Գոնդուլավարը գիշերով ծովի վրա» (1843 թ.), «Իններորդ ալիքը» (էսքիզ), «Մովային պեյզաժ», «Նավակը ծովում» (1892 թ.):

Կազանի վ. Ի. Ուլյանով-Լենինի անվան պետական համալսարանում նույնպես շատ նյութեր կան հայերի մասին: Համալսարանի երկրորդ հարկի աստիճանների հարթակի վրա պատի մոտ, ճիշտ այն լսարանի դիմաց, որտեղ սովորել է Լենինը, դրված է երկու մետրանոց մի հայկական գերեզմանաքար, որի վրա կա չափազանց դժվար ընթեռնելի հինգ տող հայերեն արձանագրություն: Այդ գերեզմանաքարը 12-րդ դարի է և համալսարան է բերվել ու այդ տեղում դրվել 19-րդ դարի առաջին տասնամյակում:

Համալսարանի Ն. Ի. Լոբաչևսկու անվան գիտական գրադարանում մենք տեսանք մի այբբենարանի ձեռագիր, որը հրատարակվել է Աստրախոսում 1815 թ., սակայն տպագիր օրինակներից ոչ մի հատ չի պահպանվել: Այբբենարանը թարգմանված է ռուսերենից և պարունակում է իր մեջ ռուսերեն և հայերեն տեքստեր: Թարգմանիչն է Կ. Շահվերդյանը: Արխիվային մի քանի փաստաթղթերից երևում է, որ բացի այդ այբբենարանից, Աստրախանում այդ ժամանակ հրատարակվել են թվաբանության և այլ դասագրքեր:

Նույն գրադարանում մեզ հաջողվեց գտնել նաև Ռուսաստանի առաջին երաժշտական-ազգագրական ամսագրի՝ «Ասիական երաժշտական հանդեսի» («Ազիատսկի մուզիկալնի ժուռնալ») երկու համար: Այդ հանդեսը տպագրվել է Աստրախանում 1816—1818 թթ. հրատարակիչը և տպագրիչն է Աստրախանի գիմնազիայի երաժշտության ուսուցիչ Իվան Դոբրովոլսկին: Ուշագրավ է, որ նա իր ամսագրի հենց առաջին համարներում տպագրել է հայկական երգեր՝ եվրոպական նոտաներով: Որքանով մեզ հաջողվեց պարզել, այդ Ռուսաստանի տերիտորիայում հայկական երգերը եվրոպական նոտաներով տպագրելու առաջին փորձն է: Հայկական երգերի տեքստերը տպագրված են թե՛ հայերեն (ռուսերեն տառերով), և թե՛ թարգմանաբար: Երգերից մեկը «Մենք խոսք ենք անում» պատկանում է աստրախանցի հայ աշուղ Չերքեզ-օղլուն (1763—1845 թթ.), իսկ մյուսի՝ «Հեյ, նոր սիրելի նազելի խանում»-ի հեղինակը անհայտ է: Արժեքավոր են նաև երգերի թարգմանությունները, որովհետև նրանք հայ աշուղների ստեղծագործությունների ռուսերեն թարգմանության անդրանիկ նմուշներն են: «Ասիական երաժշտական հանդեսը» տպագրված է լիտոգրաֆիկ եղանակով և իրավամբ համարվում է Ռուսաստանում լիտոգրաֆիայով տրված առաջին գիրքը<sup>1</sup>:

Ուշագրավ նյութեր կային նաև Թաթարական ԱՍՍՌ-ի ՆԳ մինիստրության Կենտրոնական արխիվում: Այնտեղ մեզ հաջողվեց ծանոթանալ Աստրախանի Աղաբաբյան դպրոցի ստեղծման և սկզբնական տարիների գործունեությանը վերաբերող շատ փաստաթղթերի հետ, գտնվեց նաև 1822 թ. ռուսական կառավարության կողմից հաստատված այդ դպրոցի կանոնադրությունը: Աղաբաբյան դպրոցը հարատևել է ավելի քան մեկ դար և մեծ դեր խաղացել հայ-ռուսական կապերի ու դարավոր բարեկամության ամրապնդման գործում: Հետաքրքրական է, որ դպրոցը պատրաստել է նուև հաշվապահներ, առևտրական գործի մասնագետներ և ծովայիններ՝ լոցմաններ, մի բան, որի նմանը մենք չենք տեսել մեր դպրոցի պատմության մեջ: Այդ մասին փաստաթղթերից

<sup>1</sup> А. Ф. Коростин, Русская литография XIX века, М., 1953, стр. 13.

մեկում գրված է. «...Մովսիս լոցմաններ դառնալ ցանկացող աշակերտներին նախատեսվում է սովորեցնել ծովային իրավունքը, երկրաչափություն և հարթ եռանկյունաչափության նախնական կանոնները, որպեսզի կարողանան աշխատել ծովային քարտեզներով: Մովսիս լոցմաններ պատրաստելը Աստրախանում անհրաժեշտ է այն պատճառով, որ Աստրախանի լոցմանների մեծ մասը, բացառյալ ռազմա-ծովային նավերի կառավարիչներից, անգրագետ են, իսկ ծովային քարտեզներից գաղափար անգամ չունեն, որի հետևանքով շատ նավեր են խորտակվում»<sup>1</sup>:

Արխիվում պահվում են նաև Կազանի համալսարանի պրոֆեսոր Ստ. Նապոլյանի գործերը, տրոնց մեջ է նրա ձեռքով գրած կենսագրությունը:

Թե Աստրախանում և թե Կազանում հրատարակված ռուսական թերթերում բազմաթիվ տեղեկություններ կան հայերի մասին:

Կազանի համալսարանի «Կազանսկի վեստնիկ» ամսագրում ևս հետաքրքիր նյութեր կան Հայաստանի և հայերի մասին: 1828 թ. հունվար-փետրվար համարներում տպագրված է Տոգված հայերի մասին. «Нечто об армянах», (стр. 277—285), որտեղ արտահայտված են ջերմ զգացումներ հայերի, նրանց պատմական բախտի ու դերի նկատմամբ: Այդ հոդվածում գրված է.

«Հայեր շատ կան նույնպես Տրանսիլվանիայում, Հունգարիայում, Լեհաստանում և Ռուսաստանում, և նրանք ամենուրեք աչքի են ընկնում իրենց ժողովրդական բնավորությամբ, արդյունագործությամբ, խնայողությամբ և մեծ հարստությամբ» (էջ 279):

Խոսելով Թուրքիայում և Պարսկաստանում հայերի վիճակի մասին, թերթը նշում է, որ «Ոչ ոք նրանց հայրենակիցներից արժանի չի եղել մահվան դատապարտման որևէ հանցագործության պատճառով, բայց թուրքերը դատապարտել են մահվան միայն այն նպատակով, որպեսզի տիրաճան նրանց ունեցվածքին» (էջ 283—284):

Ինչպես այդ, նույնպես և «Թուրք-հունական գործերը» սերիայով հրատարակված հոդվածներում մերկացվել են Թուրքիայի կառավարող շրջանների հակաժողովրդական դաժան քաղաքականության և ազգային ճնշման փաստերը:

Դեպի Կազան և Աստրախան կատարած մեր այս նախնական, կարելի է ասել, հետախուզական ուղևորությունը համոզեց մեզ, որ այդ քաղաքներում հսկայական քանակությամբ բազմազան անմշակ նյութ կա հայերի, հայ-ռուսական դարավոր կապերի մասին և անհրաժեշտ է ամեն տարի, ավելի երկար ժամանակով, տարբեր մասնագիտությունների գիտնականներ ուղարկել այդ, ինչպես և Ռուսաստանի, Մոլդավիայի, Ուկրաինայի այլ քաղաքները հայկական դաղթավայրերի ուսումնասիրման համար, մի գործ, որը կօգնի մեր ժողովրդի հարուստ անցյալի լրիվ և բազմակողմանի պատմությունը շարադրելուն:

<sup>1</sup> Центральный Гос. Архив Татарской АССР, ф. 92, д. 342, об. л. 31—32